ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ԵՍ-Ը. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆԸ ԵՒ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆԸ

Քանզի եթէ հնար լինէր հոգիս տեսնելու,
որքա՛ն այն փգեղ ու նուազ պիտի երեւար:
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Գրիգոր Նարեկացի Սուրբը հայոց միջնադարեան մշակոյթի հրաշափառ դէմքերից է, միանգամայն առանձնայատուկ երեւոյթ համաշխարհային գիտութեան, արուեստի ու մշակոյթի ասպարէզները ներմուծած իր աւանդներով:

Սուրբի գլխաւոր երկը՝ «Ողբերգութեան մատեանը» կամ Նարեկն ունի Սուրբգրական երկի բոլոր յատկանիշները՝ կտակարանային պատգամախօսութիւն, աւետարանական փրկայոյս լուսայեղումներ, մտքի մարգարէական պայծառութիւն, հոգեվարժական լիցքաւորող յորդոր, ճանապարհի յստակ տեսութիւն, առաջնորդական կոչ, անսրուեր ապտուածապաշտութիւն: Նարեկի ելակէտը, հենակէտն ու վախճանական նպատակը Սուրբ Գիրքն է իր երկու Կտակարաններով: Այսպիսով, Նարեկը սուրբգրական երկերի շարքին կարող ենք դասել ե՛ւ իր մակարդակով, ե՛ւ առաքելութեամբ:

Աստուածաշնչից յետոյ Նարեկացու Ողբամատեանը միակ սուրբգրական երկն է, որ յանձնարարելի է աշխարհի բոլոր մարդկանց, նրանց, որոնք նորածին են, նոր են արբունքի հասած կամ ծերութեան շեմին են: Այսինքն այն յանձնառելի է՝ անկախ տարիքից, ցեղային, դասային, սեռային, էթնիկ եւ մարդատեսակային պատկանելութիւնից, ընկերային, մասնագիտական, աշխատանքային ունեցուածքային առանձնայատկութիւններից: Նարեկը յանձնարարւում է ինչպէս ռամիկին, այնպէս էլ իմաստուններին, բարեկրօն եւ առաքինի հոգեւորականներին, ամենքին եւ բոլորին (տե՛ս՝ բան Գ.): Նարեկը յանձնարարւում է իբրեւ փրկութեան, բուժման, ապաքինման, սրբագործման, հոգեւորոգման հրաշալի ձեռնարկ:

Նարեկը մարդու զօրաւոր աղօթքն է առ Աստուած, մեղքերի խոստովանութեան, զղջման ու ապաշխարութեան սրտախորքային արտայեղումներով, աղերսներով, խորհուրդների լուսաբանումներով: Ամէն աղօթքի կամ յաւելուածի սկիզբը, որ դիմում է Աստծուն, այնպիսի խօսքերով եւ բնութագրումներով է, որոնք պիտի հիմք հանդիսանան համապատասխան խնդրանքների, աղերսների համար: Այս կերպ հիմնաւորւում են խնդրողի աղերսները հաւատքի միջոցաւ, որ Աստուած կ՚օգնի, կը բուժի, կը զօրացնի իրեն այս ինչ հիմունքով: Այսինքն՝ կապ է ստեղծւում բնագիտական պատճառագիտութեան եւ հոգեւոր կեանքի միջեւ: Այսպիսով, նաեւ տրամաբանական ամուր կապ է ստեղծւում աղօթքի տարբեր մասե-

րի միջեւ:

Նարեկացու աղօթքները լուսաբանական են, բացատրական ոճի են, այսինքն՝ նա ոչ միայն հիմնաւորում է իր ամեն մի խնդրանքը, այլեւ աղօթքի ժամանակ զարգացնում է կենդանի եւ խորունկ վարդապետութիւն, որոնց մէջ նա տալիս է իր աշխարհայեացքի հիմքերը, բնութագրում է Աստծուն, մարդուն եւ բնութեունը, այն ամէնը, ինչ կապ ունի մարդու հետ:

Բացի մարդկային հանճարից (որ նոյնպէս Աստուածային շնորհ է) Նարեկի մէջ յստակ է Աստուածային նեգոործական ուժը: Կորովամիտ մեկնութիւններն ու լուսապայծառ յայտնութիւնները նշաններ են Սուրբ Հոգու կենարար զօրութեան: Մարդկային եսականութեան ու եսասիրութեան ի սպառ բացակայութիւնը պայման է Նարեկի համընդհանուր մատչելիութեան եւ ընդհանրական օգտագործման համար: Մաքրուած սուրբ մարդն է մենախօսում Աստուծոյ հետ՝ ներկայացնելով համայն մարդկութեան մեղքերը: Քաւութիւն է աղերսում, փրկութիւն է տենչում համայն մարդկութեան համար: Մարդը խնդրել է եւ Աստուած տուել՝ Նարեկը դարձնելով համապիտանի կեցութեան գիրք, հոգեվարժարան, բժշկարան եւ ազատութեան լուսածիր եւ արդիւնագօր ծրագիր:

Ողբամատեանի խոնարհագոյն հեղինակն ունի իր երկի փրկարար զօրութեան գիտակցումը, այլապէս այն չէր յանձնարարի բոլոր մարդկանց՝ իբրեւ բժշկութեան, հոգեւորոգութեան եւ փրկութեան ձեռնարկ:

Նարեկն ինքնին Սուրբ Հոգու արտայեղում է, որի շնորհիւ հեղինակը կենդանի կինորնկարի նման բացայայտում է մարդկութեան հոգեւոր կեանքի ընթացքը, որով բացայայտում են նաեւ մարդկութեան գործած այն մեղքերը, որոնք այս կամ այն կերպ կրկնւում են անհատական կեցութիւնների ընթացքին, մեղքեր, յանցանքներ, տկարութիւններ, որոնք մարդուն իբրեւ անհատի եւ իբրեւ սեռի՝ տանում են ինքնաոչնչացման: Մեղքերի խոստովանութեան, նրանց բնոյթի նկարագրական բազմաթիւ էջերի մենք առնչւում ենք յատկապէս Նարեկի սկզբնական տասնեակ գլուխների մէջ:

Նարեկը նաեւ Աստուածային փրկարար ճանապարհի բացայայտումն է, մարդկային կեանքն իր լրումին հասցնելու՝ զղջման, խոստովանութեան, ապաշխարութեան, հատուցման միջոցով մեղաց քաւութեան ճանապարհով՝ ազատութեան, փրկութեան հասցնելու առաքելութիւնը: Նարեկը մի ամբողջական աղօթագիրք է յանուն այդ նպատակի, փրկութեան ուսուցողական օրինակ եւ բժշկարան: «Եւ արասցե՛ս զսոյն ընթերցողացն ի սիրտս յստակս՝ բժշկութիւն հոգւոց եւ մաքրութիւն յանցանաց, թողութիւն պարտուց եւ արձակումն մեղաց կապանաց: Եղիցի բոլհումն արտասուաց սովաւ վարժելոցն, եւ պարգեւեալ տացի ի ձեռն սորին ապաշաւ ըղձից (բան Գ,զ):

Եւ արասցես լինել դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց Քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն Քո, Բարձրեա~լ: Զսկսեալս իմ Դո՛ւ կատարեա: Եղիցի՛ Հոգի Քո խառնեալ ի սա, Շունչ զօրութեան Մեծիդ միասցի՛ ի Քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս (բան Գ,դ):

Մատեանը, իբրեւ աղօթարան, բժշկարան եւ իմաստարան քրիստոնէական մշակոյթի չհնացող պարծանքն է, որն այսօր էլ գործածական է նոյնչափ, ինչպէս եւ միջին դարերին:

Իբրեւ հոգեւոր (գեղարուեստական) ստեղծագործութիւն՝ այն եզակի է. Նարեկը չի ունեցել իր նախօրինակները, որոնք դրուէին իրար կողքի, ունենային ժանրային նոյնութիւն: Նարեկի ժանրի ստեղծագործութիւն հետագային եւս չի ստեղծուել, ուստի կարելի չէ Նարեկն անուանել պոեմ, որովհետեւ պոեմի ժանրային որեւէ յատկանիշ նրա մէջ առկայ չէ: Բաների համադրման յաւելուածային կարգը Ս. Գրիգորին հնարաւորութիւն է ընձեռել ազատ լինելու գրական ստեղծագործութեան եզրափակիչ խօսքի անհրաժեշտութիւնից: Նարեկի բովանդակութիւնը կազմող ԲԱՆերից իւրաքանչիւրն ունի իր սկիզբը, զարգացումը եւ աւարտը եւ այս իմաստով ամբողջական երկ է, սակայն այնպիսի ամբողջութիւն է, որը չի բացառում նոր մասերի յաւելուածային մուտքը՝ առանց խաթարելու ամբողջի ներդաշնակութիւնը: Աւելին, յաւելուածները կազմում են մի օրգանական ամբողջութիւն, մասերի ներքին կապակցութեամբ եւ փոխադարձ լրացումներով, միայն թէ դրանք ակնյայտ չեն եւ դրանցից իւրաքանչիւրն ունի իր յարաբերական ինքնուրոյնութիւնն ու ամբողջականութիւնը, նոյնիսկ ինքնաբաւութիւնը, ինչպէս մարդու ապրած իւրաքանչիւր օր, ամիս, եռամսեակ (տարուայ եղանակ) տարի: Որոշ նմանութիւն կայ անտառի ծառերին եւ գնդի զինուորներին. ամէն մէկն ամբողջի մէջ նաեւ ինքնակայ է:

Նարեկը կարելի է մեկնել բազմաթիւ առումներով՝ աստուածաբանական, փիլիսոփայական, գեղագիտական, բարոյագիտական, հոգեբանական, բժշկագիտական, գրականագիտական, լեզուաբանական, մանկավարժական…

Փիլիսոփայութեան դիտանկիւնից յոյժ հետաքրքրական է **Ենթակայի եւ առարկայի** փոխյարաբերութեան Նարեկացիական կերպափոխութիւնը, որի շնորհիւ Գիրքը դարձել է մի անզուգական ստեղծագործութիւն համաշխարհային մտքի պատմութեան մէջ: Նարեկացին **բացարձակ օբյեկտիւութեան** դիրքերից «սպանել» է իր եսը, ազատուել եսականութիւնից (էգոիզմից) բառի բուն իմաստով եւ հասել ենթակայի եւ առարկայի (սուբյեկտի եւ օբյեկտի) **բացարձակ նոյնութեան:** Դա հնարաւորութիւն է տուել հանճարեղ Սուրբին մարդկութեան գործած բոլոր մեղքերը պայմանաւորել իրենով, այսինքն՝ **Սբ Գրիգորը դարձել է Բացարձակ Գործող Անձ կամ Ենթակայ (սուբյեկտ): Եւ նրա բացարձակ սուբյեկտիւութիւնը հրաշափոխուել է բացարձակ օբյեկտիւութեան՝** անաչառ կամքի բացարձակ ճշմարտութեան. որի լոյսով էլ դիտել է իւր անձն իբրեւ **բացարձակ Սուբյեկտի՝ Սուրբ Հոգու զօրութեան արգասիք եւ Սուրբ Հոգու զօրութեամբ էլ հասնում է բացարձակ մաքրագործման, սրբութեան եւ փրկութեան:**

Եւրոպական մշակոյթի մէջ մարդկային եսականութիւնը կամ ինքնասիրահարութիւնը մերժուել է դեռեւս անտիկ դիցաբանութեան համակարգում **Նարցիսի** (Նարկիս) առասպելով: Էգոիզմը կամ եսականութիւնն ի վերջոյ անձին (անհատական կամ հաւաքական-ազգ) տանում է դէպի մահ: Ազդեցիկ է **Նարկիսի առասպելը**, սակայն այն ի զօրու չէ մարդկութեանն ազատելու այդ արատից. իր մէջ այն հոգեփոխման հնարաւորութիւն եւ ճանապարհ չի պարունակում: Այդ ճանապարհը եւ ստոյգ եղանակներն առկայ են քրիստոնէութեան, հետեւաբար եւ Նարեկի մէջ:

Նարեկացու անձի մէջ բացարձակ սուբյեկտիւութիւնը համադրւում է բացարձակ օբյեկտիւութեանը եւ նա սկսում է նմանուել Աստուածորդուն եւ նրա երկը ձեռք է բերում Սուրբգրական ստեղծագործութեան յատկանիշներ:

Նարեկացին յաղթահարել է եսականութեան վրայ խարսխուող մարդկային անհապաշպութիւնը, անհատականութեան սահմանափակութիւնը եւ մտել ամենքի մէջ, աւելի ստոյգ՝ ամենայնը առել իր մէջ, **համանձնացել,** յաղթահարել հակասութիւնն անհատի եւ հասարակութեան, ազգերի եւ ամբողջ մարդկութեան միջեւ, որը շատ բնական երեւոյթ է մարդկային հանրակեցութեան համար: Նարեկացին գերբնական վիճակի է հասել՝ ցոյց տալով անհատ մարդու գոյութեան էքստրեմալութիւնը, մարդկային կեցութեան ողբերգականութիւնը, ահաւորութիւնը:

«Բայց քանզի ձայնդ ահաւոր դպրասպանիդ հատուցման՝ ուժգինս հնչեցեալ ի ձորն վրէժխնդրութեան, կրկինս ինձ երկնէ մարտիս յարուցմունս՝ այժմէն զուշակեալ շարժումս յուզմանց ներ հակականաց, որ յիմումս անձին ցուցանի…» (բան Ա. բ):

Նարեկացու Ես-ն իր մէջ ներառում է համայն մարդկութիւնը, եւ նա որպէս հոգի՝ հասել է իր բացարձակ ազատութեանը, կամ ինչպէս փիլիսոփաներն են ասում՝ բացարձակ սուբյեկտիւութեան (ենթակայութիւն) ճանապարհով՝ հասել բացարձակ օբյեկտիւութեան՛ (առարկայութիւն), որը կոչւում է նոյնութեան փիլիսոփայութիւն: Հոգեւոր դաշտը Նարեկացու անձն է, որը դարձել համաշխարհային պատմական իրադարձութեանց առանցք: Նարեկի Ե բանը կարելի է անուանել մարդկութեան կարճառօտ պատմութիւն: Խօսքը ոչ թէ էմպիրիկ պատմութեան մասին է, վերջինիս իւրայատուկ իրադարձութիւնների ընթացիկ փոփոխութիւններով, այլ մարդկային պատմութեան մէջ էական եւ շրջադարձային մի քանի կէտերի՝ արարչագործութիւն, դրախտային կեանք, մեղսագործութիւն, համամարդկային տառապանք եւ ողբերգականութիւն, մաքրագործում եւ փրկագործութիւն: Մարդկային պատմութեան երեւութական իրողութիւնները այս առանցքների շուրջն են դասաւորւում՝ անկախ քաղաքակրթութեան զարգացման մակարդակներից:

Նարեկի մէջ մարդը ներկայացուած է եւ՛ իր երանական՝ եդեմական շրջանում, եւ՛ մեղսագործութեան պատճառով դրախտից վտարուելուց յետոյ: Տրուած է մարդու բնութագիրը, թէ Աստուած ինչ շնորհներ եւ ձիրքեր է տուել եւ մարդ որքան երախտամոռ է եղել: Եւ ովքեր հակուած են այն մտքին, թէ իբր պատմութիւնը կեղծ գիտութիւն է, թող ընթերցեն այս գլուխը եւ ասեն, թէ ինչն է կեղծ: Նարեկացին իր աղօթամատեանի մէջ պահպանել է պատմական մօտեցումը՝ հիմնուելով մի քանի փաստերի վրայ եւ յատկապէս՝ մեղսագործութեան, որը աղօթագրքի մէջ դիտարկուած ու ներկայացուած է իր բազմերեսութեամբ՝ հայ հանճարի անօրինակ բացայայտման կարողականութեամբ: Նարեկացին խոստովանել է մարդկութեան մեղքերը որպէս իր իսկ մեղքեր: Ընդ որում դասակարգել է դրանք թէ հոգեբանօրէն, ըստ տեսակների եւ թէ պատմականօրէն՝ ստոյգ կերպով, այս կամ այն նշանաւոր մեղսագործի կատարած, կամ պատմաշրջանի, կամ հեթանոսների եւ բոլոր քրիստոնեաների մեղքերը: Մարդկութեան փոխարէն կամ որպէս նրա ներկայացուցիչ՝ հանդէս է գալիս Սուրբ Գրիգորը:

Նարեկի մէջ (գլուխ Գ, ԻԶ եւ այլուր) միաժամանակ առկայ է նաեւ Ս. Գրիգորի անձը, որպէս թանձրացական ստոյգ դէմք, որպէս մարդ՝ մարմին եւ հոգի՝ իր էմպիրիկ գոյականութեամբ: Նշեալ գլուխների մէջ Նարեկացին այլոց հետ եւ ի՛ր համար է փրկութիւն աղերսում, ընդ որում հայցելով նաեւ ընթերցողաց աղօթքն իր համար: «Ծնորհեսցի, Տէ՛ր, եւ ինձ ընդ նոսին առ ի Քէն զդջումն կամաց, եւ նոցա՝ իմովս ձայնիւ՝ շունչս բարեհամբոյրս. նուի-

բեսցի վասն իմ այսու մատենիս պաղատանք նոցին, եւ բանիս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեսցին»(բան Գ, գ): «Եթէ պաղատանս բազմադիմիս ընդ իմս երկնեսցի, լիցի՛ եւ ինձ Քեզ եւ վասն սորին կրկին նուիրեալ»(անդ):

Նարեկի մէջ յաղթահարուած է ինչպէս անհատական, այնպէս էլ իմբային եսականութիւնը: Սբ Գրիգոր Նարեկացու գաղափարական հղացքը մարդու բնոյթի մասին որպէս օրգանական ամբողջութիւն, այլեւս տեղ չի թողնում այսպէս կոչուած «էլիտար» ուսմունքների համար: Մարդկութիւնը մէկն է եւ մեղաւոր: Աստուծոյ համար ընտրեալներ չկան: Ընտրեալները նրանք են, ովքեր ընդունում են Տիրոջ վարդապետութիւնը եւ ապրում նրա բարոյական համակրգի համաձայն: Նոյնիսկ իր արիւնակից հարազատներին մեր Տէրը չընդունեց որպէս իր մերձաւոր՝ չափանիշ ունենալով միայն մարդու նուիրուածութիւնն Աստծուն, նրա հաւատքն առ Աստուած: «Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր, եւ ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ազդ եղեւ նմա եւ ասեն. Մայր Քո եւ եղբարք Քո կան արտաքոյ եւ կամին զՔեզ տեսանել: Եւ ասէ ցնոսա. Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն» (Ղուկ. Ը 19-21): Առանձնաշնորհեալ ազգեր չկան ո՛չ գեներով, ո՛չ հոգեբանութեամբ: Կան մկրտուածներ եւ անհաւատներ: Յիսուս Քրիստոս իր խնջոյքին կանչում է բոլորին եւ բոլորին քրիստոնեա դարձնելով տանում փրկութեան ճանապարհով:

Երկնայինի եւ երկրայինի կապը. համանմանութիւն (անալոգիա). Ո՞րն է Նարեկի առարկայական բովանդակութիւնը: Հոգու (անձի) բացարձակ ազատութիւնը Նարեկացուն հնարաւորութիւն է տուել Նարեկի մէջ արտայայտել մարդու **էութիւնը**՝ նրա **գոյութեան** բոլոր մակարդակներով, առօրեական վիճակներից մինչեւ հոգու խորհրդաւոր, սովորական հայեացքի համար անմատչելի ծալքերը, խորութիւնները: Նարեկի մէջ Մարդը մեզ բացայայտում է նաեւ իր վախճանի պահին, նաեւ դատաստանի առջեւ, որի մասին քչերն են խօսել կամ գրել (բան ՀԳ):

Նարեկացին իր իմացական կատարեալ կարողութիւններով, յստակ տեսութեամբ եւ կատարեալ իմաստութեամբ խորքային բացայայտումներ է արել ներքին մարդու կամ մարդու էութեան վերաբերեալ, խորհրդագիտական տեսադաշտի մէջ ունենալով այնպիսի երեւոյթներ, որոնք նախքան այդ մարդկային ուշադրութեան սահմանների մէջ չեն տեղաւորուել: Այդպիսիք են **Միւռոնը**, «**Մեղա**»ն, մարդուն տրուած աստուածային **շնորհները**, մարդկային հիւանդութիւնների՝ ախտերի պատճառագիտական բանիբուն կապերը մեղքերի հետ, **Կոչնակը**… Սուրբն անսահման սիրով է գրել այդ ամէնի մասին՝ հարուստ նիւթ թողնելով գեղագիտական, հոգեբանական, իմաստագենական, բնագիտական մեկնութեանց համար՝ մարդու ներաշխարհի տարբեր կողմերը մատչելի դարձնելով մարդկային պատկերացման համար, բացայայտել է հոգեբանութիւնը բառի բուն իմաստով: Նա ոչ թէ գրել է բառի ուղղակի իմաստով, այլ աղօթել է, զի նրա խօսելն արդէն աղօթք էր:

Նարեկի մէջ արտացոլուած են մարդու հետ առնչուող բոլոր էակների եւ գոյական բոլոր իրողութիւնների բնոյթն ու իմաստը մարդկային կեանքում՝ ամենապարզագոյն եւ չնչին մժղուկներից մինչեւ երկնային հրեշտակները (բան ԿԹ), սրբերն ու առաքեալները, մարտիրոսներն ու մարգարէները (բան Հ, ՀԱ, ՀԲ): Նարեկի մէջ առկայ են հոգեկան սոսկալի վիճակների արտացոլանքը, նաեւ երկնային արքայութիւնը, մարդու հոգեւոր կեցութեան ամենաբազմազան դրսեւորումները, նոյնիսկ մարդու մարմնի կազմութեան խորհրդագիտա-

կան լուսաբանումը (բան ԽՁ): Խորագնին մի հայեացք է նետուած մարդկային մարմնի ինքնատիպութեանը, որի նպատակը մարդուն միտելն է դէպի հոգեւորն ու երկինքը:

Այդ ամէնը Սբ Գրիգորը վերցրել է իր մտքի պայծառ լուսարձակի տակ եւ բացայայտել նրանց բնոյթը խորհրդագիտօրէն, այսինքն՝ ըստ էութեան, առարկայացուած պատկերների եւ իրողութեանց հետեւում ի յայտ բերելով նրանց երկնային, յաւիտենական բնոյթը:

Նարեկը սոսկ մարդաբանութիւն չէ բառի առօրէական իմաստով, այլ երկնքի եւ երկրի, Աստուծոյ եւ մարդու կապակցութեան բացայայտումն է՝ աշխարհի հիմքը կազմող խորհուրդների մեկնութիւնների ու լուսաբանումների միջոցով: Աստուածայինի եւ մարդկայինի, երկնայինի եւ երկրայինի, էութեան եւ երեւոյթի հոգեւորի եւ մարմնականի կապը Նարեկի մէջ իրագործում է տեսանելիից դէպի անտեսանելին, երկրայինից դէպի երկնայինը վերընթացութեան ճանապարհով՝ լայնօրէն կիրառելով **անալոգիայի կամ համանմանութեան եղանակը** խորհրդակիր առարկաների կամ նշանների միջոցով խորհուրդների բացայայտումներով:

Բաւական բազմազան է Նարեկացու ապացուցողական եղանակախումբը, որ նա գործադրում է Նարեկի մէջ՝ ձգտելով բացարձակ ենթակայականութիւնից հասնել բացարձակ առարկայականութեան, եւ այդ խմբի մէջ առանձնահատուկ է **համանմանութեան** (անալոգիա) դերը, որը համապիտանի միջոց է Տիրոջ ստեղծած տարբեր աշխարհները (երկինքն ու երկիրը) կամարակապելու: Եւ իրապէս նա հասնում է բացարձակ առարկայականութեան: Ենթակայականն այն է, որը ելնում է Ես-ից՝ որպէս սկզբնապատճառ աշխարհում եղած եւ տիրող փոփոխութիւնների, հետեւապէս՝ Ադամից սկզբնաւորուած մեղսագործութեան: Թւում է, թէ անհատ մի մարդ պիտի որ կապ չունենայ աշխարհում մինչեւ իր ծնունդը կատարուած իրադարձութիւնների հետ եւ ինքն անկարող պիտի լինի որեւէ կերպ նրանց վրայ ներգործելու, ուրեմն՝ ինչպէ՞ս մեղադրել իր չկատարած մեղսագործութեան համար: Նարեկացին սակայն հիմնաւորում է, որ միակ մեղաւորն ինքն է: Որքա՜ն մարդու միտքն ու հոգին հզօր պիտի լինեն, որպէսզի իրեն **էմպիրիկ սուբյեկտից** վերածեն **բացարձակ սուբյեկտի**, որպէս համաշխարհային դրամայի եւ ողբերգութեան գործող անձի: Նա դէմ յանդիման է ելնում Աստծուն որպէս ոչ թէ մասնաւոր անձ կամ մարդկութեան ներկայացուցիչ, այլ իբրեւ **բացարձակ ենթակայ**: Նա այդպիսի դիրքորոշման հասնում է՝ վերանալով ամէն մի եսականութիւնից, իրօք նրա Եսը հասնում է տրանսցենդենտալ (անդէական) մակարդակի, բացարձականում է, զի մարդը հոգի է եւ նա ի զօրու է լինելու **Մարդ ըստ էութեան**, այսինքն՝ մարդկութիւն: Նարեկացու այդ զօրութիւնն աղերսում է **Գարեգին Նժդեհի** ասոյթին, որ ոգու մարդուն ոչինչ անհնարին չկայ:

Նարեկացին, մեր պատկերացմամբ, իրօք գերմարդ է, սակայն ոչ այնպիսին, ինչպէս ընկալում էր գերմարդը ԺԹ-Ի դդ. եւրոպական մշակոյթում, որի ներկայացուցիչներից է Ֆ. Նիցշէն: Նրանց դիրքերը լիովին հակադիր են. Նիցշէն ելնում է աստուածմերժութիւնից, կարելի է ասել՝ նա բացարձակացնում է մարդկային բնազդները եւ անսահման իշխանապաշտ է: Նարեկացին գերմարդկային վիճակի է հասել աստուածային զօրութեամբ, շնորհներով եւ հանճարով՝ ընդունելով Աստծուն իբրեւ Բացարձակ ճշմարտութիւն, արդարութիւն, զօրութիւն, սրբութիւն…

Նարեկը եւ ներկայիս բնագիտութիւնը. Միջնադարեան մատենագրի եւ Սուրբի Աստուածային յաւիտենական ճշմարտութիւնների բացայայտումներն այնպիսի մակարդակ են ներկայացնում, որը դեռ նոր-նոր դառնում է մասնակիօրէն մատչելի ժամանակակից բնագիտութեանը: Արդի բնագիտութիւնը իր աքսիոմատիկ նոր համակարգով լրումն ու ամբողջացումն է դասական բնագիտութեան, որ դարերի ընթացքին դարձել է մեզ համար ողջախոհութեան հիմք: Մարդու մտքի համար միանգամայն պարզ ու հասկանալի է, որ ամբողջը մեծ է մասից եւ դա ապացուցման կարիք չի զգում: Նմանապէս՝ երկու զուգահեռ ուղիղները որքան էլ շարունակուեն՝ չեն հատուի: Սակայն հաշուառման այլ համակարգերում այդ աքսիոմատիկ ճշմարտութիւնները կորցնում են իրենց ուժը, ակնյայտութիւնը վերանում է: Ոչ մեխանիկական տիրոյթում, պարզւում է, ամբողջն այլեւս մեծ չէ մասից: Նմանապէս՝ մի հոգին փոքր կամ նուազ չէ մնացեալից, որովհետեւ նա **հոգի** է: Հոգին իր մէջ ի զօրու է պարփակել ամէնը, զի ունի ամէն ինչ ընդգրկելու անսահմանօրէն «ընդարձակուելու» յատկութիւն: Հոգին անհաշուարկելի փոքր ժամանակաընթացքին կարող է պարուրել ամբողջ տիեզերքը: Ինչպէս որ ոչ դասական բնագիտութեան համար հիմք չէ դասական աքսիոմատիկ համակարգը, այնպէս էլ հոգեկան իրողութեան համար հիմք չեն բնագիտական ստորոգելիները, բնութեան օրինաչափութիւններն ու սկզբունքները: Հոգին քանակ եւ որակ չունի: Հոգին միտք է, որ արտաքուստային է, սակայն մեր սովորական պայմաններում հոգու մասին դատողութիւններ են անում նիւթական աշխարհի համանմանութեամբ կամ անալոգներով: Հոգեկան աշխարհի խորհրդաւորութիւնը շատ թէ քիչ բացայայտում է մեկնութիւններով, լուսաբանումներով, օրինակներով, որոնք վերցուում են նիւթական կամ ֆիզիկական աշխարհից: Այսօրինակ միտքը իմաստաւոր է միայն ոչ դասական, նորագոյն մտածողութեան համար, որը հիմնուում է յարաբերականութեան ընդհանուր տեսութեան, քուանտային կամ միջուկային ֆիզիկայի, ոչ էկլիդէսեան երկրաչափութեան, մի խօսքով՝ բնագիտութեան ներկայիս նուաճումների վրայ, որոնց շնորհիւ մտածողութեան ու տրամաբանութեան աքսիոմատիկ հին համակարգը փոխարինուում է նորով, եւ հինը դառնում է նորի ընդամէնը մասնաւոր դէպք, կիրառութեան իր կոորդինացիոն սահմանափակ համակարգով: Նոր մտածողութիւնը վերջ է տալիս, դուրս է մղում նիւթապաշտական ըմբռնումները նաեւ բնագիտութիւնից, եւ պարզւում է, որ նիւթը, կորպուսկուլան ընդամէնը նիւթապատրանք է եւ նրա վրայ կարելի չէ կառուցել գիտութեան շէնք: Նիւթը չքանում է, վեր է ածում ալիքի, որն ունի երկակի բնոյթ: Այսինքն՝ նիւթական աշխարհը պատրանքային է, իրականը աստուածայինն է, նիւթին, գաղափարին, ոգուն ծնունդ տուողը Աստուած է, ընդ որում կարեւորը ոչ թէ նիւթն է, այլ այն գաղափարը, սկզբունքը, որի իրականացման համար նիւթը միայն միջոց է: Ըստ բնագիտական նոր մտածողութեան՝ մասը իրօք կարող է հաւասար կամ նոյնիսկ մեծ լինել ամբողջից: Աշխարհիկ գիտակցութեան համար այսպիսի մտածողութիւնն անմատչելի է եղել դասական բնագիտութեան շրջանակներում: Որովհետեւ այդ մտածողութեան աքսիոմատիկ համակարգը փաստարկման հնարաւորութիւն չի տալիս եզրակացութիւն անելու ամբողջից մեծ մասի վերաբերեալ:

Ելնելով այս սկզբունքներից՝ մեզ համար լիովին պարզւում է, թէ ինչպէս է Նարեկացին (անհատը, մասը) իր վրայ վերցնում մարդկութեան մեղքերը, որովհետեւ հոգեւոր

աշխարհում անպարակուսելի է, որ Սուրբն ի զօրու է վերապրելու մարդկութեան կեանքը, այլեւ վերահմապատուորելու:

Հոգեւոր իրողութիւնը կամ հոգու աշխարհը մենք ընկալում ենք իբրեւ հրաշք, որն անբացատրելի է բնագիտական լեզուով: Ոչ դասական, այսինքն նորագոյն բնագիտութիւնը մերձենում է հրաշքների բացատրման բարեկրթութեանը, որովհետեւ այն որոշ իմաստով աննիւթական է եւ հասել է նիւթի ընկալմանը որպէս պատրանքի, որը ներկայիս գիտութեան կարեւորագոյն յայտնագործութիւններից է, որովհետեւ պարզում է, որ որոշ տիրոյթում եւ որոշակի վիճակում **նիւթը կորցնում է իր նիւթականութիւնը՝** ձեռք բերելով երկակի բնոյթ: Եւ այսպիսով վերանում է նիւթական աշխարհի՝ իբրեւ ինքնածին նիւթի («Եւ ես երգեցի նիւթն ինքնածին…», Եղիշէ Չարենց), յաւիտենական նիւթական իրականութեան կարծրատիպային պատերացումը:

Նարեկացիական հրաշքի լուսաբանման երկրորդ տարբերակն այն է, որ **մարդն ըստ էութեան հաւասար է մարդկութեանը**, ինչպէս թագաւորը՝ թագաւորութեանը: Մարդն իր էութեամբ, այսինքն մարդ հասկացութիւնն իր մէջ ներառում է բոլոր մարդկանց, որովհետեւ մարդն իր էութեամբ հոգի է, գաղափարակիր է, որի մէջ մտնում են բոլոր մարդիկ. մարդն ի զօրու է վերապրել մարդկութիւնն իր մէջ եւ հասնելու իր էական նպատակադրութեանը, իր առաքելութեան լրումին: Գրիգոր Նարեկացին իր անձի միջոցով, շնորհիւ իր սրբութեան, ճանաչել է մարդուն, մարդկութիւնն առհասարակ: Սուրբ Գրիգորն իր էութեամբ մարդ է եւ միաժամանակ՝ մարկութիւն: Եւ հրաշալին այն է, որ նա իր անձնական, ժամանակաւոր գոյութեան ընթացքին է ճանաչել մարդկութիւնը, վերապրել մարդկութեան պատմութիւնն իբրեւ իր իսկ կենսական ընթացք: Կարեւոր չէ, թէ նա որքան ժամանակում է վերապրել մարդկութեան կեանքը: Բացայայտել է մարդկութեան գործած մեղքերը եւ դրանք վերապրել, ներկայացրել է Աստծուն իբրեւ իր իսկ գործածը եւ իրեն՝ իբրեւ ենթակայ, իբրեւ գործող անձ: Գործող անձը, քանի որ գործում է իր իսկ ազատ կամքով, պատասխանատու է Աստուծոյ առջեւ: Նարեկով Սուրբ Գրիգորը նախքան իր երկրային կեցութեան աւարտը՝ արդէն իսկ ներկայանում է Աստուծոյ դատաստանին: Սակայն, ինչպէս արդէն կռահելի է, Նարեկը ոչ թէ դատաստանագիրք է, այլ բժշկարան, այսինքն՝ փրկութեան գիրք:
Խնդիրը Նարեկի մէջ միայն մէկ անձի փրկութիւնը չէ, այլ ամենայն մարդկանց: Այդ նպատակով էլ ստեղծուած է Նարեկը: Նարեկը կեցութեան գիրք է, վարժուելու, առաջնորդուելու, քաւելու, բժշկուելու, իմաստանալու, կատարելագործուելու, Աստծու արքայութեանը հասնելու, Նրա թագաւորութեան մէջ մտնելու...

Միւռոնի սրբալոյս խղի մեկնութեանը նուիրուած ՂԳ բանի մէջ Նարեկացին անեւրեւակայելի մի համեմատութիւն է անում՝ Աստուծոյ ամենազօրութիւնը ի ցոյց բերելու համար.«Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ յերկրիս լայնութեամբ եւ անդնդոց ներքնոց խորութեամբ, ծովուց բազմութեամբ ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն ի մեծէ բերի, ի փոքր զոյս տեսականեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի. զի մի՛ նորոգ իմն երեւելով յայլ էութենէ՝ առ աչս հարեւանցի երկեւանութիւն ինչ վարկանիցի, վիրաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց (բան ՂԳ, ժ): Խօսքը միւռոնի մասին է, որի մէջ Աստուած ներդնում է Ինքն Իրեն, որով կնքուելով՝ մարդ դառնում է քրիստոնեայ: Հարցն այն է, թէ ինչպէս է Աստուած ամենամեծը տեղադրում չնչին մի նիւթի մէջ:

Նորագոյն բնագիտական յայտնագործութիւններից բխող աշխարհի իմաստաւոր պատկերը մենք տեսնում ենք արդէն Ժ դարի մտածող Գրիգոր Նարեկացու երկի մէջ, քանզի սուրբերի յայտնագործութիւններն իրենց վրայ են կրում յաւիտէնականութեան կնիքը:

Մարդն ինքը հրաշալի է թէ՛ հոգով, թէ՛ մարմնով: Մարդու մարմինը համեմատելի չէ որեւէ կենդանու մարմնի. «Ահա ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց, ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար, իբր ի թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել, ո՛վ յիմար, զիա՞րդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիռս անապատականս համարեցար: Իբր զճրագ բազմաբերանեան ի յաշտանակի մարմնիդ հաստատեցար գլխոյդ բոլորութիւն, զի եւ այսու յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զԱստուած տեսանել եւ զմնացականացն իմաստասիրել: Բանականութեանն յարգանօք կրկին ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեանն՝ որ առ քեզ եղէն՝ անարգել լեզուով խօսեսցիս: Զեռինդ հաստմամբ՝ յարմարոստեան մատանցդ շառաւիղօք՝ զգործնականացն տնօրինել զտնտեսութիւն, իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն Աստուծոյ՝ «աստուած» կոչեցար» (բան ԽԶ, բ): Մարդու մարմինը կառուցուած, այսինքն արարուած է այնպէս որ արդէն բջջային մակարդակի վրայ ի յայտ է գալիս անհատի հաւասարութիւնը մարդկային հաւաքականութեանը: Բջջային բազմացման հնարաւորութեան տեսակէտից մարդն իբրեւ ներզօր կարողականութիւն՝ գրեթէ հաւասարւում է մարդկութեանը. մեր ամէն բջիջին համապատասխան կայ մէկ մարդ արտայայտ վիճակով: Մարդը մարդկութիւնն է:

Արդէն հոգեւոր իմաստով այս երեւոյթը փաստարկելը դժուար չէ, որովհետեւ **հոգին հրաշքային գերբնական, վերբանական երեւոյթ է**: Հոգին, ինչպէս նշել ենք, վեր է չափերից ու չափումներից, տեղից ու ժամանակից, պատճառականութեան օրէնքներից: Հոգու համար կիրառելի չեն քանակն ու որակը, ծաւալային բնութագրումները: Հոգին ներքին մարդն է՝ արտաժամանակեայ եւ յաւիտենական: Մարդը պիտի հոգին իր մէջ յայտնագործի եւ ապրի հոգեւոր կեանքով: Դրա համար նա պիտի զերծ լինի մեղքերի քայքայիչ ներգործութիւնից:

Նարեկեան մեղսագիտակցութիւնը. Նարեկացին, թւում է, իրեն գերմարդու տեղ է դրել, կամ երեւակայութեան գիրկն է ընկել, եւ կամ «մոլորեալ» է, որովհետեւ «առողջ տրամաբանութեամբ» անկարելի է, որ մէկ մարդ մեղաւոր լինի բոլոր մարդկանց փոխարէն: Դա նոյնն է, ինչ մտածելը՝ թէ մասը մեծ է ամբողջից: Սակայն փաստ է, որ իսկապէս, եւ ոչ թէ երեւակայութեամբ, Նարեկացին իր վրայ է վերցրել համայն մարդկութեան մեղքերը, զղջացել, խոստովանել Աստծոյն, **ապաշխարել**: Իրօք մասը հաւասար կամ մեծ է ամբողջից, ինչպէս մարմնացեալ Քրիստոսն է մեծ աշխարհից:

Այսպիսով՝ Նարեկացին բացայայտում է մարդկային հոգեբանութեան օրէնքները **մեղսագիտակցութեան** միջոցով: Անցեալը, ներկան եւ ապառնին հոգեւոր գործունէութեան համար գրեթէ տարբերութիւն չունեն եւ դրանց փոխարէն մի ընդհանրական ներակայութիւն է. անցեալը, կատարեալը ներկայանում է իբրեւ կատարելիք, իբրեւ դաս, իբրեւ իդէալ, որին դեռ նոր պիտի հասնենք, իսկ անցեալի մեղքերը, որոնք քաւուած չեն, անցնում են մի սերունդից միւսը, եւ ծանրանում է մարդկութեան բեռը: Իր հոգու զօրութեամբ Նարեկացին վերապրել է մարդկութեան անցեալ կեանքը որպէս ներկայութիւն եւ ամէնը վերապ-

րել է, որպէս թէ պատմութեան դերակատար եւ թերակատար, այսինքն մեղսական մարդն ինքն է, ամէն ինչ պարփակող իր հոգով. նա ընկալել է ամբողջ պատմութիւնը որպէս իր կենաց պատմութիւն եւ այս պարագային Նարեկացու անձը ինքնիրականացել է մարդու էութեան մէջ. Նարեկացին հասել է էական ինքնաճանաչման եւ ինքնիրականացման՝ բացելով Աստուծոյ դէմ-յանդիման մարդկութեան պատմութեան էջերը որպէս իր հոգու ներքին ծալքեր, եւ դատ է խնդրել Նրանից, ներում եւ քաւութիւն աղերսելով: Խոստովանելով մարդկութեան մեղքերը որպէս իր իսկ կատարած՝ նա ապաշխարել է նաեւ դրանց համար:

Նարեկի մէջ մարդկային մեղսագիտակցութիւնը քանակապէս եւ որակապէս արտայայտուած է առաւելագոյն չափով, եւ չկայ մէկ այլ ստեղծագործութիւն, որ այս իմաստով համազօր լինի Նարեկին: **Մեղքի եւ մոռսագործութեան** Նարեկացիական ըմբռնումը խարսխուում է խնդրի քրիստոնէական պատկերացման վրայ, ըստ որի մեղսահակութեան եւ մեղսագործութեան առարկայական հիմքը (անհուսափելիութիւնը) մարդու բնոյթն է: Քանզի մարդ - արարածն ի բնէ կաւից է, հետեւաբար՝ ենթակայ քայքայման, ապականութեան: Տարերքը, որքան էլ կառուցուածքային բարձր մակարդակ ունենայ՝ միեւնոյն է՝ պիտի քայքայուի եւ ապականուի: Ուրեմն՝ մեղքը նախապարունակում է մադկային կեցութեան խորքերում Եւ Աստծոյ համար անակնկալ ու անկանխատեսելի չի եղել ադամեան մեղսագործութիւնը, որի մասին նշուած է Սուրբ Գրքում: Սակայն Ադամը դատւում է (պատժւում է) ոչ թէ իր հոգեղէնութեան բերումով, այլ աստուածային պատուիրանի անտեսման, Աստուծոյ հետ ուխտի դրժմամբ: Իսկ մարդու հոգեղէնութիւնը պայման է (վտանգ է) մարդու մեղսահակութեան, որը յաղթահարւում է մարդու ազատ կամքով՝ Աստուածային պատուիրանը որպէս կենաց առաջնորդութիւն ընտրելու եւ պահելու միջոցով: Սթափ գիտակցութեամբ մարդ ի զօրու է եւ ի վիճակի է յաղթահարելու իր մեղսահակութիւնն ամէն պարագայի, զի Աստուած նրան օգնում է եւ հաւատաւոր մարդը մշտապէս գտնում է Բարձրեալի օգնութեան ծիրում:

Մեղքը բիւում է մարդու գոյութիւնից, բայց ոչ էութիւնից: Դազմակերպ կաւին Աստուած ներշնչել է **հոգի**, որ հէնց մարդու էութիւնն է: Մարդ էականօրէն կապուած է Աստծուն եւ ստեղծուած է ըստ Աստծոյ պատկերի: **Մարդու էութիւնը նրա հոգին է,** աննիւթական, աստուածային իրողութիւն, որի յայտնութիւնով (գիտակցումով) է սկիզբ առնում բուն մարդկային կեանքը: Մարդու էութիւնն Աստուածային արքայութեան մէջ է:

Հակասութիւնը մարդու էութեան եւ գոյութեան միջեւ, ուրեմն, ի սկզբանէ՛ է, եւ մարդու գոյութեան բնորոշ հատկութիւններն են՝ պաքարը, դրամատիկութիւնն ու ողբերգականութիւնը:

Գրիգոր Նարեկացին առաջինը չէ խօսել մեղքերի մասին: Մեղքի անդրանիկ գիտակցումը ադամական է: Այնուհետեւ՝ հանրամատչելի է մեղքի պատկերացումն իբրեւ չարահակութիւն եւ այնպիսի գործերի կատարում, որոնց վախճանը կորուստն է, աւերն ու մահը: Հին Կտակարանում մեղքի գիտակցման եւ ապաշխարութեան չափանիշն ու կարգաւորիչը օրէնքն է: Յիսուս Քրիստոս լուսաւորեց մարդկութեանը նոր աշխարհայեացքով եւ մարդկային հոգին ջերմացրեց բացարձակ անշահախնդիր սիրով: Միաժամանակ՝ նա մարդկանց բացայայտ է արել խորքային մեղսագիտակցութիւնը, որն իր մէջ բացի **մեղքգործողութիւնից** ընդգրկում է **մտաւոր մեղքը** եւ **խօսքային մեղքը**: Մեղքի հինկտակարանային սահմանափակ ըմբռնումն ակնյայտ եղաւ պոռնիկ կնոջ նկատմամբ ցուցաբերած

Տիրական գթութիւնից, որին օրէնքով (հինկտակարանային կանոնակարգով) մահապարտիժ էր սահմանուած եւ որն էլ կամենում էին իրագործել օրէնքի ջատագովները, եւ միայն Տիրոջ միջամտութիւնը փրկեց մեղսագործուհուն (Յով. Ը 1-11): Մարդկութեան Փրկիչը ցոյց տուեց, որ էական տարբերութիւն չկայ գործով մեղաւորների եւ մտքով ու խօսքով մեղանչածների միջեւ: Քրիստոս, այսպիսով, մարդկանց զգաստացրեց՝ հասկացնելով, որ անմեղ մարդ չկայ: Ելնելով այս ըմբռնումից՝ Նարեկացին գրում է. «Եւ արդ յոյս բարեաց տնկեալ ի սրտի, անձն իմ կործանեալ, եւ գօտեաւն հաւատոց պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝ զկրկնապղտոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովան լեր բարերարին Աստուծոյ, զմտացդ՝ իբրեւ զգործոց, զխորհրդոցդ՝ իբրեւ զլրութեանց, զանտեսիցն՝ իբրեւ զյայտնեցելոց, զսրտիդ ծածկութից՝ իբրեւ զբարբառումն ձայնից, զակնարկութեանցդ՝ իբր զարդիւնականաց մեղանաց, զազդել շրթանցդ՝ իբրեւ ի գլուխ ելելոց չարի, զոտիցդ հետոց՝ իբրեւ զպատուիրանաւն Աստուծոյ վազողաց, զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրեւ ի հեղումն արեան գործողի, զծիծաղելն բնաւին՝ իբրեւ զկամաւորական լքումն շնորհի, զերդմնականն՝ որ թէ ի հանդէպս թէ ի տարադէպս՝ իբր զգործակցութիւն խաբողին, զամբարտաւանութիւնն՝ իբր զհին կործանիչ նախասպեղծին բարձրութեան, զսրտին նեղութիւն՝ իբրեւ զթերութիւն հաւատոց, զմեղկութիւնն՝ իբրեւ զպարտութիւն զօրաւորին պնդութեան, զտրտունջն առ վտանգս կրիցն՝ իբր զուրացութիւն ուխտին որ առ Տէրն, զապարասանութիւնն՝ իբր ոչէիւք առ վեհսն գոռոզութիւն, զհպարտութիւնն՝ իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց, զակամայիցն ընդ կամաւորացն, զբռնացելոցն ընդ հաւանականացն, զեկամտիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնսն ընդ ապաստուածութեանն, զփոքունսն ընդ սաստկագունիցն, զնուազունսն ընդ յոլովիցն, զանճառիցն իմոց՝ իբր զճառելեաց գիտողին, զանգրելոց վնասուցն՝ իբր զնկարելոց տեսողին ի յարձան մագնեստիս վիմի, զթեթեւագունիցն առ խտիր մտաց՝ իբր զստուար ծանրութիւն բեռանց, զինդիր ծածկելոցն՝ իբր զճշդով պահանջումն սատերն սակի ի բերանոյ կիտին կորիւնի չորեքդրամեան կշռութեամբն, զանդնդականացն գործոց՝ իբր ի յականջս Աստուծոյ արագ ժամանելոց» (բան ԽԵ, ա-իթ):

Նարեկեան մեղսագիտակցութիւնը նախ իւրայատուկ կապի արտացոլանք է հանուր մարդկութեան միջեւ՝Նախահօրից մինչեւ գալիք բոլոր սերունդներն ադամական մեցքի միջոցով կապուած են միմեանց: Նարեկեան մեղսագիտակցութիւնն անօրինակ է ենթակայի իմաստով: Մեղքի ենթական Նարեկացին համարում է ոչ թէ մարդկութիւնը, այլ ինքն իրեն: Աշխարհի բոլոր մարդկանց գործած բովանդակ մեղքերի, յանցանքների, անօրէնութիւնների, վայրապացքի, թշուառութիւնների, աղէտների, փլուզումների միակ պատճառ Նարեկացին տեսնում է ինքն իրեն: Ինքն է եւ ուրիշ ոչ ոք. ոչ հեթանոսը, զի անգէտ էր, ոչ հրէան, որ մեծամտացաւ, այլ միայն ինքը:

Մեղքն անբաժան է մարդու գոյութիւնից, եւ դա ի միտ է առել Աստուած, այսինքն եղել է մարդապտեղծ Աստուծոյ ծրագրի մէջ, որպէսզի ի վերջոյ ԱստուածՈրդին մարդանար եւ սկսէր ու լրումին հասցներ փրկագործութիւնը: Մարդն իր մի կողմով՝մարմնով հողեղէն է եւ ենթակայ՝ տարերքի ներգործութեանը: Մարդ ո՛չ միայն մեղսունակ է, այլեւ մեղսահակ: Այդ իսկ պատճառաւ կարելի չէ ասել, թէ Աստուած անտեղեակ էր, որ մարդ պիտի մեղք գործի: Քանզի Աստուած տիեզերքի եւ մարդու պատմութիւնը տեսնում է միանգամայն, ոչ միայն տեսնում է, այլ Ինքն է որպէս այդպիսին ծրագրում եւ Ինքն էլ իրագործում: Սակայն մար-

դուն, սրանից ելնելով, պիտի չնոյնացնենք մանեքենին, որ նա պատմութեան դերակատար չէ: Ինքնագիտակից մարդիկ կարող են լինել մաքուր անօթներ Աստուածային գաղափարի իրագործման համար: Հոգով եւ գիտակցութեամբ եւ ազատ կամքով օժտուած մարդը կարող է հասնել ինքնա- եւ աշխարհաճանաչման բարձունքներին եւ Աստուածային բարեհաճութեամբ հանդէս գալ իբրեւ Աստուծոյ համագործակից, նոյնիսկ լինել Նրա ժառանգորդ: Մարդասէր Աստուած թոյլ է տալիս մարդուն լինել այդպիսին:

Նարեկը մի ներդաշնակ համակշռութիւն է մարդկային մեղսալից բնոյթի եւ Աստուածային իդէալի միջեւ: Աստուածայինը ներառուած է մարդկային աշխարհ՝ նրա փրկագործութեան համար: Մարդը չի կորչում մեղաց ծովում, որովհետեւ Աստուած ամենողորմ է, ամենահաս, ամենագէտ, ամենախնամ, իր Միածնին մարդկութեան համար զոհաբերելու աշխարհացունց եւ հոգեցունց գործողութեամբ, որով սկսուեց մարդկութեան պատմութեան բոլորովին նոր շրջան, նոր մշակոյթ, նոր բարոյականութիւն, նոր-բարեսակ քաղաքակրթութիւն, որով միայն հնարաւոր է ժամանակակից մարդկութեան գլխին սեւակնած աղէտների, ամէն կարգի հակասութիւնների վերացումը:

Աղամական մեղքը մարդուն զրկում է իր պայծառակերպութիւնից, եւ դրանով սկիզբ է առնում մարդկութեան վայրասլացքը: Ապականում են մարդկային բնոյթն ու կեցութիւնը Նարեկացին յստակ տեսութեամբ եւ խորունկ հայեացքով ի մի է բերել մարդկութեանը, ճանաչել ներքին մարդուն, այսինքն՝ մարդուն էապէս, նրա նախապատմական եւ պատմական ընթացքը, հոգեբանական ու բարոյական փոփոխութիւնները, նկարագրի շարժը, մարդկային ողբերգութիւնը, որ մեղքի մէջ է, որ մարդուն դարձրել է մահկանացու եւ կրաւորական, տառապող էակ, ցաւերով լեցուն եւ թշուառ, հոգսաշատ կեցութեամբ: Ամէն մարդ՝ իբրեւ հոգու եւ մարմնի հանգոյց՝ ապրում է մեծ փորձութիւն այդ հանգուցալուծման ժամանակ: Կապուած իր հողին (երկրին)՝ մարմնաւոր մարդը սարսափում է մահից եւ այն հազարաւոր անգամ վերապրում՝ նախքան մահանալը: Մարդուն (մեղաւոր) բաժին են հասնում բազմաթիւ հիւանդութիւններ, տկարութիւն, արատներ եւ թերութիւններ. հանրային կեանքը լցնում է անլուծելի հակասութիւններով, բազմանում են յանցանքները, դաւաճանութիւնը, ատելութիւնը, սկսում են կռիւները, պայքարը, պատերազմները, եւ այդ ամէնը մարդու մեղքի եւ մեղաւոր նկարագրի արդիւնք են: Մեղքի հետ ծնում են եսականութիւնը, մրցակցութիւնը (Կայեն), չար նախանձը, ատելութիւնը, անտեսումը, արհամարհանքը, շեղումն արդարութիւնից եւ Աստուածային ճանապարհից:

Նարեկացին այս ամէնն իմացել է, վերապրել է եւ ապաշխարելով՝ ներում խնդրել: Եւ Աստուած նորանոր ձեւեր է կիրառում մարդու վերանորոգման նպատակով: Նոյ Նահապետի ժամանակից մարդկութիւնը նորակերպուեց եւ զարգացման նոր լիցքեր ստացաւ: Սակայն ի վերջոյ նորից ընկաւ իր բարձունքից, եւ Աստուած իր Միածին Որդուն՝ Յիսուս Քրիստոսին ուղարկեց երկիր, եւ Փրկիչը խաչի վրայ կամաւորաբար մահն ընդունելով՝ մարդկութեանն ազատեց աղամական մեղքից՝ աւերելով դժոխքը եւ ուսուցանելով փրկութեան Իր վարդապետութիւնը, եւ որպէս բոլոր ժամանակների տեսանող Մարգարէ՝ բացայայտ արեց Իր երկրորդ գալուստը՝ արդար դատաստանով եւ ենթեցեալների հոգու եւ մարմնի յարութեամբ:

Թէեւ մարդ մեղսահակ է, սակայն մեղքը, ինչպէս նշել ենք, չի բխում մարդու էութիւնից: **Մարդու էութիւնը նրա աստուածանմանութիւնն** է, որ տրուած է նրա հոգեւոր կողմով: Հետեւաբար՝ մարդու առաքելութիւնը, նրա վախճանական նպատակը իր հոգեղէն մարմինն օգտագործելու միջոցով աստուածային արքայութեան մէջ մտնելն է՝ սրբացման ճանապարհով: **Նարեկը աստուածերգութիւն է, դրական իդէալի պատկերագծում, նաեւ՝ մարդերգութիւն՝ մարդկութեան կատարելագործման վախճանական նպատակն ու հանգրուանները պատկերագրելու իմաստով:** Աստուածային յատկութիւնները՝ արդարութիւնը, իմաստութիւնը, սրբութիւնը, կատարելութիւնը, զօրութիւնը, բարութիւնը մարդու համար եւ կենաց ճանապարհներ են եւ կատարեալագործման ընթացքի վերջնակէտեր:

Նարեկը միաժամանակ մարդկութեան հոգեբանութեան, բարոյագիտութեան աստուածաճանաչման, մարդագիտութեան նաեւ ինքնաճանաչման եւ ինքնամաքրման, հոգենորոգման եւ բժշկման գործնական յաւէրժական ձեռնարկ է՝ լիալեցուն լոյսով, գիտելիքով, կենսոյժով եւ զսպանակուած զգացմունքային եռանդով, որն առատապէս բաշխում է բոլորին եւ, ինչպէս աստուածային ողորմածութիւն, փոքրերին աւելի, քան թէ աշխարհի մեծամեծներին:

Նարեկացին՝ հոգենկարիչ. Մենք սիրում ենք արտայայտուել, յատկապէս մեր դէմքերը, իբրեւ մեր ինքնութեան վաւերական, ի ցոյց ենք դնում այս ու այնտեղ եւ սիրում նայել մեր դիմապատկերին:

Մարդու էութիւնը սակայն նրա դէմքը չէ, այլ հոգին: Հոգին չի երեւում, լուսանկարել չի լինի, որեւէ կերպարանք տալ, պարագծել հնարաւոր չէ, նոյնիսկ բառերով (խօսքով) չենք կարող սահմանել: Կարելի է ասել, որ հոգին մեր էութեան անանիթական բաղադրիչն է: Սա սահմանում չէ, այլ բնորոշում, քանզի հոգու տեսակային առանձնայատկութիւնը չի բացայայտում, զի հոգին իրենից դուրս որեւէ սեռի մէջ կարող չէ մտնել որպէս տեսակ:

Ինչեւէ, մենք ոչ միայն ուրիշների, այլ նոյնիսկ յաճախ մեր հոգու մասին գաղափար չունենք, թէեւ այն կրում ենք մեր մէջ, եւ փորձում ներկայացնել մեր անձով: Կամ ինքն է մեզ կրում իր մէջ:

Ինչպէս որ բացայայտել է մեղքերը, նոյնպէս եւ՝ նրանցից ազատուելու եղանակները՝ ապաշխարութեան եւ Աստուածային շնորհաց միջոցաւ:

Նարեկացին Մատեանի մէջ զարգացնում է **դինամիկ հոգեբանութիւն** եւ մարդուն բարոյական տեսակէտից չի դիտում իբրեւ միանգամայն աւարտուն էակ, չար կամ բարի, եւ այդ յատկութիւնները չի բխեցնում նրա կենսաբանական առանձնայատկութիւններից կամ չի պայմանաւորում **ծնագիտական ժառանգութեամբ**: Մարդու մէջ անընդհատ տեղի են ունենում փոփոխութիւններ. «Զի որով չափով չափեցից զանձինս ստգտանք, ի Քոցդ անուազ գթութեանց այսրէն չափեցայց, ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս ընդ մեծագունիցըս պարտեաց: Եւ որքան վիրացն հարուածք անբժշկականք եւ անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին եւ իմաստք արուեստից բարձրեալ Բժշկիդ բարեհոչակեալ լուսաւորեսցին. եւ ի պարտուցն առաւելութիւն՝ նոյնքան Փոխատուիդ առատաբրութիւն բարեբանեալ միշտ պսակեսցի, ըստ խնկաւորդ Քում առակի» (բան Թ, գ):

1. Նարեկացին «նկարել է» մեր հոգին: Նա շուռ է տուել մեր «ներսը» եւ դարձրել «դուրս», ի ցոյց է բերել: Նա արտայայտ է դարձրել մեր հոգիները եւ պարագծել, պատկերել մեր հոգու ընթացքը, ներքին կեանքը, տուել մարդու ամբողջական նկարագիրը, բացայայտել է մեր «ճակատագիրը»:

Ոչ ոք Նարեկացուց առաջ այդ բանը չի արել:

2.Նա մեզ անաչառ, դաժան ճշմարտութեամբ բացայայտել է, ցոյց է տուել մարդկային կեանքի ողբերգականութիւնը, մարդու մեղսահակութիւնը եւ նրա մեղկանալն ու ողորմելի վիճակը:

3. Նարեկացին բացայայտել է մարդու մեղաւոր բնոյթը եւ այն անձնաւորել, դիտարկել որպէս իր իսկ անձնական մեղքեր, խոստովանել իբրեւ իր իսկ գործածներ եւ զղջալով ներկայացրել է Աստուծոյ դատաստանին եւ խնդրել հատուցում, բայց ոչ արդարութեամբ, այլ՝ ողորմաբար: Զի ոչ մի մարդ ի զօրու չէ փրկուելու իր շնորհաց հիմքով, զի ոչ ոք է արդար եւ միայն՝ Աստուած: Նարեկացին ապաշխարել է նաեւ մարդկութեան գործած մեղքերի համար:

4. Սուրբն իր յոյսը դրել է ոչ թէ ապաշխարութեան, իր մաքրուելու կարողութեան եւ մաքրութեան վրայ, այլ Աստուածային ողորմածութեան:

5. Նարեկը մարդու փրկագործութեան մի «մեխանիզմ» է, մի համակարգ, մի շարունակական ընթացք եւ գործողութիւն, որի մասնակիցները ոչ միայն մարդը (Նարեկացին) եւ Աստուած է, այլ երկնային եւ երկրային բոլոր ուժերը: Տիեզերական դրամա է եւ ողբերգութիւն: «Ողբերգութեան մատեանի» մէջ իրենց տեղն են գտել տիեզերքի բոլոր արարածները՝ մլակ - թրթուրներից սկսած մինչեւ մեծագոյն սուրբերը, առաքեալներն ու մարգարէները, բարի եւ չար ուժերը, երկնային զօրութիւնները՝ հրեշտակաց դասերով, Սուրբ Աստուածածինը, Սողոմոն իմաստունը (յատուկ գլուխ), Դաւիթ թագաւորը (Սաղմոսների գլուխները, Ծ-ծգ):

Ի հարկէ, Նարեկը սկզբից մինչեւ վերջ՝ մարդագիտութիւն լինելով հանդերձ՝ Աստուածաբանութիւն է, սակայն ամենահրաշալին այն է, որ Նարեկը յոյժ յուզական աղօթագիրք է՝ կենաց բոլոր վիճակների, պարագաների համար եւ աշխարհի բոլոր մարդկանց համար է՝ բոլոր դասերով եւ առանձնայատուկ կացութեամբ:

Նարեկը չգերազանցուած աղօթագիրք է, որի օգտագործման (օպտիմալ օգտագործման) համար յատուկ ցանկեր են կազմել, որոնք ծառայել են իբրեւ ուղեցոյց: